Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 15-ին կայացած նիստի

Արձանագրություն N 16

ՕՐԱԿԱՐԳ

1. 1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բժշկասոցիալական փորձաքննության համակարգի բարեփոխումների մասին.

2. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ.

3.“Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին” ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ.

4.ՀՀ պետական բյուջեով սահմանված՝ “Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում” ծրագրի շրջանակներում նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռք բերվող սայլակների տեխնիկական բնութագրերի մասին.

5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների իրազեկման միամսյակ հայտարարելու վերաբերյալ.

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

Հանձնաժողովի անդամները՝

Ջ.Բաղդասարյան - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Ա.Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Մ.Մկրտչյան - ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ

Հ. Աբրահամյան - Հայաստանի հաշմանդամների "Փյունիկ" միության նախագահ

Ա. Ալավերդյան - "Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության "ՈՒնիսոն" հասարակական կազմակերպության նախագահ

Ս. Թադևոսյան - "Հույսի կամուրջ" հաշմանդամ երեխաների եւ երիտասարդների իրավունքների պաշտպանություն" հասարակական կազմակերպության նախագահ

Լ. Ներսիսյան - "Աստղիկ" հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա" հասարակական կազմակերպության նախագահ

Ս. Օհանյան - "Հաշմանդամների "Փարոս" կրթության եւ մշակույթի զարգացման կենտրոն" հասարակական կազմակերպության նախագահ

Ս. Մաղաքյան - «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության նախագահ

Ա.Կեսոյան - ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հացերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների եւ տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ նիստին մասնակցել են՝

Ժորա Ասատրյան՝ ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանի առաջարկով

Հ.Օհանյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ՝ նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկով

Հրավիրվածներ՝

Հ.Դավթյան Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովութայան վարչության գլխավոր մասնագետ

Թ.Մանուկյան “Արաբկիր” բժշկական կենտրոնի սուրդոլոգիական ծառայության

	ղեկավար
Լ.Ենգիբարյան	ՀՀ բժշկասոցիալական փորձաքննական գործակալության մեթոդական օգնության և վերլուծության բաժնի պետ
Հ. Խաչատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Է.Գևորգյան	Ֆինանսատնտեսգիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Ն.Մուրադյան	Իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի հերթական նիստին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը և նշեց, որ օրակարգում ընդգրկված հարցերը արդիական են և առաջիկա կարճ ժամանակահատվածում լուծումներ են պահանջում:

Օրակարգը հաստատելուց հետո առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանը: Տեղեկացրեց, որ նախարարության կողմից իրականացվել են համապատասխան ստուգումներ ԲՍՓ գործակալության փորձաքննական բաժիններում՝ Լոռու թիվ 1, թիվ 2 և թիվ 3 ԲՍՓՀ-ներում, Շիրակի թիվ 1 և թիվ 2, Տավուշի ԲՍՓՀ-ներում: Դրանց հետևանքով խախտումներ և չարաշահումներ թույլ տված մի շարք բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նախագահներ ազատվել են աշխատանքից: Մասնավորապես՝ աշխատանքից ազատվել են հոգեբուժական, մանկական, Երևանի թիվ 2, Գեղարքունիքի թիվ 2, Լոռու թիվ 3 ԲՍՓ հանձնաժողովների նախագահները: Իրականացվել է ԲՍՓ հանձնաժողովների սպասարկման տարածքների փոփոխություններ:

Մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել գործող՝ բժշկասոցիալական փորձաքննության գործընթացը կանոնակարգող իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ իրավական ակտերի նախագծեր, որտեղ նախատեսվում է հստակեցնել բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի առանձին դրույթներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները փորձաքննվող անձի համաձայնության դեպքում, կարող են դիտորդի կարգավիճակով մասնակցել բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին: Մասնակցության կարգը սահմանվելու է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով: Նշվեց, նաև որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում տեղադրվելու են՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերի ժամանակացույցը, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ցանկը, որոնց ներկայացուցիչները փորձաքննվող անձի համաձայնության դեպքում, կարող

են դիտորդի կարգավիճակով մասնակցել բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին:

Պարոն Ալավերդյանը հարց բարձրացրեց այն դեպքի վերաբերյալ, որ հաշմանդամություն ունեցող անձը առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու ժամանակ անկախ հիվանդության բարդությունից պետք է անցնի փորձաքննություն ոչ շուտ քան երեք ամիս:

Տիկ.Բաղդասարյանը նշեց, որ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ պետք է քննարկեն այն վերականգնման հեռանկարի բացակայություն ունեցող հիվանդությունների ցանկը, որը հնարավորություն կտա հիվանդին անմիջապես ուղեգրել բժշկասոցիալական փորձաքննության:

Արտահայտվեցին՝ Ա. Օրբելյանը, Հ.Դարբինյանը, Ա.Ալավերդյանը, Ս.Թադևոսյանը, Լ.Ներսիսյանը, Լ.Ենգիբարյանը, Ա.Ասատրյանը:

- առաջարկվեց վերանայել ՀՀ կառավարության թիվ 276-Ն որոշման “Բժշկասոցիալական փորձաքննական որոշման բողոքարկման վերաբերյալ” կետը.

Տիկ. Բաղդասարյանը նշեց, որ նախատեսվում է ԲՍՓ հանձնաժողովների ընդունած որոշումների վերանայման նոր մեխանիզմ՝ ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում նախատեսվում է նոր՝ բողոքարկման բաժնի ստեղծում, որը կիրականացնի բժշկասոցիալական փորձաքննության բողոքարկված որոշումների քննարկում: Բողոքարկման բաժնի առարկությունների շրջանակներում՝ հանձնաժողովի կողմից վերափորձաքննության արդյունքում կայացված նոր որոշման հետ համաձայն չլինելու դեպքում անձը կարող է որոշումը բողոքարկել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին: Նման դեպքերում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ առողջապահության նախարարի համատեղ հրամանով կարող է ձևավորվել մասնագետների խումբ, որը ԲՍՓ գործի ուսումնասիրության արդյունքում կտա փորձագիտական եզրակացություն:

- Հարց բարձրացվեց բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին մասնակցեն ընտանեկան բժիշկը կամ հիվանդին ուղեգրող բժիշկը՝ փորձաքննվող անձանց առողջական վիճակը ներկայացնելու նպատակով:

Տիկին Բաղդասարյանը նշեց, որ մասնավորապես ՀՀ կառավարության մարտի 2-ի թիվ 276 որոշման 7.1 կետում նախատեսվում է բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին առաջին անգամ իրականացվող փորձաքննությանը կմասնակցի ընտանեկան բժիշկը կամ բուժող բժիշկը՝ փորձաքննվող անձանց առողջական վիճակը ներկայացնելու նպատակով:

- ՀՀ առողջապահության կողմից առաջարկվեց Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների նիստերին 88-ձևի փոխարեն ներկայացվի պոլիկլինիկաների բժշկափորձագիտական բաժնի պետի կողմից եզրակացությունը:

Նախարարը հանձնարարեց՝.

- ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ քննարկել պոլիկլինիկաների բժշկափորձագիտական բաժնի պետի կողմից տրվող եզրակացության հարցը:
- Մեկ անգամ ևս ամփոփել ներկայացված առաջարկությունները և քննարկել ՀՀ առողջապահության նախարարության հետ:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ Ա.Կեսոյանը: Ներկայացրեց "ՀՀ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին" օրենքի նախագծը նշելով, որ քննարկվել է շահագրգիռ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ և արված առաջարկությունների մեծ մասն ընդունվել է:

Հատկապես նշեց, որ ՀՀ էկոնոմիկայի և հասարակական կազմակերպությունների հետ քննարկվել է ՀՀ օրենքի նախագծի գլուխ 6-րդ հոդված 14 "Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային իրավունքի և զբաղվածության ապահովում" բաժնում կատարվել է փոփոխություն, որտեղ ընդգրկվել է "Կազմակերպությունների համար, անկախ սեփականության ձևից, սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (այսուհետև քվոտա) հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար" հարցը:

Պարոն Լ.Ներսիսյանը հարց բարձրացրեց հաշմանդամություն ունեցող անձի խնամակալ կամ խնամյալ հարցի վերաբերյալ:

Տիկ. Բաղդասարյանը նշեց, որ ՀՀ օրենքում նախագիծը ընդունել ենք "սոցիալական պատրոնաժ" հասկացությունը, որի կիրառման համար պետք է մշակվեն մի շարք չափորոշիչներ:

Տիկ. Թադևոսյանը նշեց, որ ՀՀ օրենքի նախագծի նպատակն է պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու արժանապատվությունը և ապահովել նրանց արդյունավետ սոցիալական ներառումը:

Արտահայտվեցին նաև՝ Ա.Օրբելյանը, Ա.Ալավերդյանը, Ջ.Բաղդասարյանը, Ա.Ասատրյանը:

Պարոն Ասատրյանը նշեց, որ ՀՀ օրենքի նախագիծը դեռ քննարկման կարիք ունի: ՀՀ օրենքի նախագիծը նախատեսվում է ընդունել 2014 թվականին, որը իր հետ կբերի մի շարք չափորոշիչների մշակման:

Պարոն Մաղաքյանը ներկայացրեց, որ "Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինք" Հ/Կ առաջարկություն է արել ՀՀ օրենքի նախագծի գլուխ 6-րդ հոդված 14-ի վերաբերյալ, սակայն այն չի ներառվել և մի շարք այլ իրավական ակտերի մշակման ընթացքում էլ արված առաջարկությունները չեն ներառվում:

Տիկ.Բաղդասարյանը ներկայացրեց, որ բոլոր առաջարկություններն էլ ներառված են ՀՀ օրենքի նախագծում:

Նախարարը հանձնարարեց՝

- կարգավորել հասարակական կազմակերպությունների կողմից էլեկտրոնային փոստով ստացվող գրությունների գործընթացը:

Երրորդ հարցը "Եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման, դրանց գնային արժեքի որոշման կարգը և պետական հավաստագրի ձևը հաստատելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրեց հաշմանդամների հիմնահարցերի և հավասար հնարավորությունների

ապահովման բաժնի պետ Կ.Պետրոսյանը: Նախատեսվում է լսողական սարքերի ձեռքբերման նոր եղանակ, ինչը հնարավորություն կտա լսողության խնդիր ունեցող անձին՝ ունենալ իր անհատական կարիքներին առավելագույնս հարմար սարք:

Ներկայացվեց, որ պատրաստվում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, հնարավորություն տալով 18-30 տարեկան երիտասարդներին, ովքեր չունեն հաշմանդամության խումբ, բայց ունեն լսողության խնդիրներ կարող են ստանալ եվրոպական արտադրության լսողական սարք:

Արտահայտվեցին՝ Թ.Մանուկյանը, Ս.Թադևոսյանը, Ա.Օրբելյանը, Ջ.Բաղդասարյանը, Ժ.Ասատրյանը, Է.Գևորգյանը:

- Տիկ. Մանուկյանը նշեց, որ կան երեխաներ, ովքեր իրենց միջոցներով արդեն իսկ ձեռք են բերել լսողական սարք, հետևաբար կարելի է տվյալ հավաստագրով ձեռք բերել լսողական սարքի հզորությունը մեծացնող պարագաներ:

Ժ.Ավետիսյանը և Է.Գևորգյան նշեցին, որ հնարավոր չէ հավաստագիրը օգտագործել այլ գործարքների համար, քանի որ հավաստագրում հստակ նշված է լսողական սարք ձեռք բերելու չափանիշները:

Տիկ.Բաղդասարյանը հավելեց, որ հավաստագիրը էլ ավելի անհատական մոտեցում է տալիս ընտրության համար:

Նախարարը նշեց, որ հավաստագիրը հնարավորություն է տալիս գնել ծառայություններ, որի համար պետք է ավելի հստակ դրվեն հավաստագրի օգտագործման պահանջները, առաջին իսկ գործընթացի ժամանակ արդեն արձագանքը կլինի ծառայության մատուցման դրական և բացասական կողմերի վերաբերյալ, որը հնարավորություն կտա նոր չափորոշիչներ մշակելու համար:

Որոշվեց երրորդ հարցն ընդունել ի գիտություն:

Չորրորդ հարցը՝ ՀՀ պետական բյուջեով սահմանված՝ “Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում” ծրագրի շրջանակներում նախատեսված հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռք բերվող սայլակների տեխնիկական բնութագրերի մասին զեկուցեց հաշմանդամների հիմնահարցերի և հավասար հնարավորությունների ապահովման բաժնի պետ Կ.Պետրոսյանը:

Տիկ.Պետրոսյան ներկայացնելով ՀՀ պետական գնումների միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռք բերվող սայլակների տեխնիկական բնութագրերը, նշեց,որ դրանց տեսակները 6-ից դարձել են 9-ը: Ներկայացվեց, որ նախապես գրություն է ուղարկվել չորս հասարակական կազմակերպություններին, ովքեր ներկայացրել են իրենց առաջարկությունները՝ հաշմադամի սայլակի տեսակների վերաբերյալ, որի հիման վրա էլ պատրաստվել են տեխնիկական բնութագրերը:

Արտահայտվեցին՝ Ա.Մկրտչյանը, Ս.Մաղաքյանը, Ս.Օհանյանը, Ս.Թադևոսյանը, Ջ.Բաղդասարյանը, Ա.Ասատրյանը:

“Սկարպ” Հ/Կ-ի նախագահ պարոն Ա.Մկրտչյանը առաջարկեց, որ այդ ցանկում ընդգրկել նաև ակտիվ սայլակներ, որոնք հարմար են դրսում օգտագործելու համար:

“Լիարժեք կյանք” Հ/Կ նախագահ Ս.Մաղաքյանը նշեց, որ հիմնականում ուշադրություն դարձնել գնվող սայլակների որակական հատկանիշներին:

“Փարոս” Հ/Կ նախագահ Ս.Օհանյանը նշեց, որ սայլակների տեսականին չի փոխվել, այլ սայլակի չափերն են փոխվել: Իսկ ինչ վերաբերվում է ակտիվ սայլակներին, ապա քանի որ կիսասպորտային սայլակներ են կարելի է այն տրամադրել 18-30 տարեկան հաշմանդամություն ունեցող անձանց:

“Հույսի կամուրջ” Հ/Կ նախագահ Ս.Թադևոսյանը ներկայացրեց, որ հանրապետություն է ներկրվում հաշմանդամի սայլակներ տարբեր բարեգործական հիմնադրամների կողմից, որը համակարգված չէ պետական մակարդակով:

- Նախարարը հանձնարարեց՝
- մշակել չափորոշիչներ հաշմանդամի սայլակ ձեռք բերելու և բաշխելու վերաբերյալ.
- քննարկել ձեռք բերվող սայլակների տեսակների հարց
- համակարգել ՀՀ տարբեր կազմակերպությունների կողմից ներկրվող սայլակների տրամադրման հարցը:

“Սկարպ” Հ/Կ-ի, “Լիարժեք կյանք” Հ/Կ-ի,“Փարոս” Հ/Կ-ի, “Ունիսոն” Հ/Կ-ի նախագահներին հանձնարարվեց՝

- աջակցելու նպատակով՝ ակտիվ սայլակների տեխնիկական բնութագրերի և տարիքային խմբերի սահմանման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

Ազգային հանձնաժողովը հաստատեց օրակարգի վերջին՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց խնդիրների իրազեկման միամսյակի ժամանակացույցը:

Նիստի ընթացքում բարձրացված բոլոր հարցերն ու առաջարկությունները հանձնաժողովի նախագահի հանձնարարականով լրացուցիչ կքննարկվեն:

Հաշմանդամություն ունեցող անձանց
հարցերով զբաղվող ազգային
հանձնաժողովի նախագահ՝ **Ա.Ասատրյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Կեսոյան**